Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՃՏ 2020. «Դիլիջանում խոցելի անձանց աջակցության սոցիալական ձեռնարկատիրության և մասնագիտական ուսուցման կենտրոնի ստեղծման» դրամաշնորհային ծրագրի եզրափակիչ արարողություն

2023թ. հունվարի 19-ին Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում տեղի ունեցավ «Դիլիջանում խոցելի անձանց աջակցության սոցիալական ձեռնարկատիրության և մասնագիտական ուսուցման կենտրոնի ստեղծման» 74,879 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի եզրափակիչ արարողությունը՝ Ճապոնիայի կառավարության Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Դիլիջանի համայնքապետ պարոն Դավիթ Սարգսյանը, Հայաստանի համայնքների միության նախագահ, պարոն Էմին Երիցյանը, ինչպես նաև այլ հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ:

Ծրագիրը նպատակն էր ստեղծել զբաղվածության հնարավորություններ ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների համար ու հետագայում նպաստել վերջիններիս ապրուստի և տնտեսական անկախության բարելավմանը՝ կառուցելով սոցիալական ձեռներեցության և մասնագիտական ուսուցման կենտրոն, որը տրամադրում է լվացքի և սրճարանների ծառայություններ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում: Արդյունքում տարեկան մոտ 360 մարդ օգտվելու է ծրագրից:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Կենտրոնի մուտքը

Լվացքատանը տրամադրված սարքավորումները

Կենտրոնի բազմաֆունկցիոնալ տարածքը